ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա — Միավորայինացնահատման իրականացման ընդունված տեսակները:

Կատարող — Սուսաննա Ստեփանյան

/անուն,ազգանուն հայրանուն /

Արագածոտնի մարզ Գեղածոր գյուղի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, քիմիայի ուսուցչուհի

/դպրոց մասնագիտություն, ըստ վերապատրաստման խմբի /

Ղեկավար՝ ——Մանյա Պետրոսյան——————————————

/անուն,ազգանուն /

Գյումրի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ……3
1. Միավորային գնահատման իրականացման ընդունված տեսակները ……4
1.1Գնահատան. միավորային գնահատման առանձնահատկությունները 4
2. Հետազոտական աշխատանքը հարցաթերթիկների միջոցով ……11
Եզրակացություն ……15
Օգտագործված գրականության ցանկ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր հետազոտական աշխատանքի *թեման* է <<Միավորայինի գնահատման իրագործման հիմնական տեսակները>>:

Աշխատանքի *նպատակն* է ներկայացնել միավորայինի գնահատման իրագործման հիմնական տեսակները:

Նշված նպատակն իրականացնելու համար առաջադրել ենք հետևյալ *խնդիրները*՝

- ✓ Ուսումնասիրել գնահատման մասին տեսական գրականություն,
- ✓ Սահմանել՝ ի՞նչ է գնահատումը, ի՞նչ տեսակներ ունի,
- ✓ Մեկնաբանել միավորայինի գնահատման էությունը,
- ✓ Ներկայացնել միավորայինի գնահատման տեսակները,
- ✓ Ներկայացնել 10 միավորանոց համակարգի էությունը,
- ✓ Կատարել հետազոտական աշխատանք՝ միավորայինի գնահատման իրագործման արդյունավետության վերաբերյալ:

Կրթական գործընթացում ինչքան մեծ նշանակություն ունի ուսումնական նյութը ճիշտ և գեղեցիկ ներկայացնելը, այդքան էլ կարևոր է աշակերտի յուրացրածը գնահատելը: Սխալ կամ թերի գնահատումը կարող է վատ հետևանքներ ունենալ և յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հստակ պատկերացում ունենա գնահատման կարգի մասին: Այս հանգամանքով է պայմանավորված մեր թեմայի *արդիականությունը*:

Աշխատանքը բաղկացած է համակարգչային շարվածքի 16 էջից:

Գլուխ 1. ՄԻԱՎՈՐԱՑԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. 1 ԳՆԱՀԱՏՈՒՄ. ՄԻԱՎՈՐԱՑԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գնահատումը սովորողի մասին տեղեկություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքները մի քերելու և վերահսկելու գործընթաց է: Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է, ինչպես նաև ուսման որակի բարելավումն ու վերահսկումը:

Սովորողների առաջադիմության ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու իրար փոխլրացնող ձևերից [1]՝

ա/ ուսուցանող գնահատում, որն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և, սովորաբար, ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ ուսուցչի կողմից սովորողին արված առաջարկություններով, դիտողություններով և/կամ մեկնաբանություններով,

բ/ միավորային գնահատում, որը կիրառվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի / թեմաների յուրացման աստիճանն ստուգելիս, և որն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու -հաշվառելու միջոցով:

Միավորային գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի որոշակի մասն ուսումնասիրելուց հետո և ունի վերահսկող գործառույթ: Սովորողների ուսում-նառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ ամրագրելու համար գործածության մեջ են ստուգման հետևյալ տեսակները՝

1. բանավոր հարցում,

Հղում 1 (էջ 20)

2. գործնական աշխատանք,

3. թեմատիկ գրավոր աշխատանք,

Տնային և կարճ ժամանակի համար նախատեսվող աշխատանքների միավորային գնահատումը պարտադիր չէ: Ստուգման տեսակների բազմազանությունը նպատակ ունի տարբեր տեսանկյուններից չափել աշակերտի «գլխում եղածը», որպեսզի արդյունքում ունենանք առավել հավաստի գնահատական: «Շատ ավելի հեշտ է չափել գլխարկը, քան գլխում եղածը»: «Գլխում եղածը» չափելը ոչ թե ֆիզիկական, այլ պսիխոմետրիկ չափում է: Այդ չափման արդյունքի հավաստիությունը կախված է տարբեր տեսանկյուններով չափումների քանակից, որքան շատ լինեն չափումների տեսակները, այնքան հուսալի ու հավաստի կլինեն եզրակացությունները:

Ուսումնական գործընթացում ստուգման տեսակների քանակը որոշվում է՝ ելնելով առարկայական դաշտում դրանց իրագործելիության հնարավորություններից:[2] Ժամանակի ընթացքում ստուգման պարտադիր տեսակները կարող են փոփոխվել՝ ավելանալ կամ պակասել: Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր կիրառման ընդհանուր ծավալով պետք է ընդգրկի տվյալ առարկայի՝ գնահատման ենթակա կիսամյակային ամբողջ ուսումնական ծրագրային նյութը և դրան բնորոշ կրթության բովանդակային բաղադրիչները: Մեկ կիսամյակում ստուգման յուրաքանչյուր տեսակի կիրառման հաճախականությունը որոշելու նպատակով ծրագրային նյութը բաժանվում է մասերի, որոնք կոչվում են թեմաներ: Միավորային գնահատման նպատակով կարելի է (ոչ պարտադիր) օգտագործել կարճաժամկետ թեմատիկ աշխատանքներ, ինչպես նաև տնային առաջադրանքներ՝ որպես բանավոր հարցումներ: Միավորային գնահատման ենթակա պարտադիր աշխատանքից բացակայած սովորողի համար նշանակվում է այն հանձնելու նոր ժամկետ: Տարբեր բաղադրիչներով միավորային գնահատումն օգնում է առավել ամբողջական պատկե -րացում կազմել սովորողի մասին: Դրանով բացահայտվում են վերջինիս՝ տարբեր կարողությունների և հմտությունների տիրապետման աստիճանները: Այդ համա- պատկերում սովորողին պարզ են դառնում նրա գործունեության հաջողված և թերի կողմերը: Դա հնարավորություն է ընձեռում սեփական

Հղում 2 (էջ 20)

թերությունները վերացնել, ինչպես նաև ճիշտ կողմնորոշվել ապագա մասնագիտություն ընտրելիս:

Միավորային գնահատումն աշակերտի ուսումնական ձեռքբերումների նիշային կամ թվային արտահայտությունն է, որի միջոցով պատկերացում է կազմվում կրթական պահանջների աշակերտի համապատասխանության աստիճանի մասին: Ընթացիկ առաջադիմության արդյունքները բացահայտելու նպատակով գործածության երաշխավորվող չորս տեսակներից յուրաքանչյուրը հնարավորություն է տալիս ստուգելու սովորողի, խմբի, դասարանի և դպրոցի կողմից հանրակրթական պետական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի պահանջների կատարման ընթացքը, յուրաքանչյուր սովորողի ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների փաստացի վիճակը, նրա արժեքային համակարգը:

Բանավոր հարցում: Բանավոր հարցումը գնահատման մի տեսակ է, որի ժամանակ աշակերտը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը՝ դրսևորելով ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրանով ստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման ու վերարտադրման ընդունակությունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը: Այն ավելի ամբողջական պատկերացում է տալիս աշակերտի մտավոր կարողությունների, գիտելիքների յուրացման, լեզվամտածողության, վերարտադրելու և ստեղծագործական կարողությունների մասին:
Բանավոր հարցման միջոցով ստուգվում են սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով.

- բանավոր խոսք,
- վերարտադրություն,
- հաղորդակցության,
- համագործակցություն,
- լեզվամտածողություն,
- գիտելիքի յուրացում.
- տրամաբանություն,
- ստեղծագործական մտածողություն,

- ուսումնական գործունեություն ցուցաբերելու (մոդելավորելու) կարողություններ:

Բանավոր հարցումը կարելի է իրականացնել՝

- առանձին սովորողների՝ տեղում կամ գրատախտակի մոտ հարցման միջոցով,
- աշակերտների ուղղված բանավոր հարցերի միջոցով,
- տնային աշխատանքների ստուգմամբ,
- համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ:

Բանավոր հարցումը կարելի է գնահատել հետևյալ հիմնական չափանիշներով.

- ակադեմիական գիտելիքի իմացություն,
- կիրառելու կարողություն,
- ներկայացնելու կարողություն,
- ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու կարողություն,
- միջառարկայական կապեր տեսնելու կարողություն:

Գործնական աշխատանք և կիրառություններ: Հանրակրթության դերը պայմանավորված է նաև նրա գործնական-կիրառական նշանակությամբ:[3] Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս: Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին (ենթադրվում է նաև չափիչ սարքերի կամ համակարգչի կիրառության): Գործնական կարող ենք համարել այն աշխատանքները, որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ: Գործնական աշխատանքներ են ուսումնական փորձերն ու լաբո- ratոր աշխատանքները, ինչպես նաև ուսումնական գործընթացում նախատեսվող ֆիզիկական պատրաստվածությունն ու այլ ֆիզիկական աշխատանքներ: Կարևոր է նկատի ունենալ, որ սովորողների սոցիալական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտվում են որպես

Հղում 3 (էջ 20)

ուսումնական թեմաների ուսուցմանն ուղեկցող պահանջներ: Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են [4].

• ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,

• մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,

• նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության

շարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը:

Սովորողների երկայացվող չափորոշիչային և ծրագրային պահանջների համա- ձայն, նախատեսվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքներ.

1. հարցումների, դիտարկումների միջոցով տվյալների հավաքում և օգտագոր -ծում աղյուսակների և գծապատկերների տեսքով,
2. մոդելների, ձևանմուշների և մանրակերտերի (մակետների) պատրաստում,
3. դասավանդման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի ստեղծում (պաստառներ, ցուցափեղկեր (ստենդներ), տեսաֆիլմեր, էլեկտրոնային ներկայացումներ և այլն),
4. լաբորատոր աշխատանքների կատարում,
5. երևակայական փորձեր:

Կատարած գործնական աշխատանքի համար սովորողները գնահատվում են միավորներով:

Դրանք կարող են հանձնարարվել ինչպես տանը, այնպես էլ դպրոցում կատարելու համար: Գործնական աշխատանքների հիմնականում անցկացվում են երկու ձևով: Առաջին՝ աշակերտը դասընկերների ներկայությամբ կատարում է որոշակի գործնական առաջադրանք, որն ուղեկցվում է բացատրություններով: Այս աշակերտները հետևում են բացատրությանը և, անհրաժեշտության դեպքում, կատարում համապատասխան շտկումներ կամ մեկնաբանություններ: Երկրորդ՝ սովորողների կարողությունների ու հմտությունների ստուգումը կատարվում է միաժամանակ՝յուրաքանչյուր աշակերտին տալով անհատական կամ տարբերակված առաջադրանք: Այս դեպքում նախընտրելի է, որ աշխատանքները կատարվեն դրանց համար

Հղում 4 (էջ 20)

նախատեսված առանձին տեսքում, որն ուսուցիչը ստուգում և գնահատում է դասի ընթացքում կամ դասերից հետո: Տեղում իրականացվող գործնական աշխատանքները անցկացվում են խմբային մեթոդների կանոններով:

Գործնական աշխատանքները գնահատելիս հաշվի են առնվում.

- տրված գործնական առաջադրանքին բնորոշ ընդհանրացումների, գաղափարների ու փաստերի ըմբռնման աստիճանը,
- նորովի կամ ստեղծագործական մոտեցումը,
- առաջադրանքի համար անհրաժեշտ հաշվարկներ կատարելու կարողությունը,
- գործողությունների արդյունքները վերլուծելու և հաղորդելու կարողությունը:

Թեմատիկ աշխատանք: Թեմատիկ գրավոր աշխատանքն միավորային գնահատման մի տեսակ է, որի իրականացման ընթացքում սովորողն իր ուսանած ուսումնական նյութը ներկայացնում է գրավոր: Այդ աշխատանքները տրվում են ծրագրային որոշակի թեմա ուսուցանելուց հետո: Թեմատիկ գրավոր աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողների ներկայացվող չափորոշիչային պահանջների համապատասխան առաջադրանքներ՝դրանց յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով: Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝թեմատիկ աշխատանքը կարող է լինել բանավոր կամ գործնական:

Առաջադրանքները կարող են տրվել թեստերով, որոնցում ներառված են ծրագրում

առկա տարաբնույթ առաջադրանքներ.

- պատասխանի ընդարձակ շարադրմամբ,
- ճիշտ պատասխանի ընտրությամբ,
- կարճ պատասխան պահանջող,
- ապացուցում պահանջող,
- գործնական, կիրառական նշանակություն ունեցող,
- կառուցվածքի փոփոխություն պահանջող,
- գծապատկերի կազմման պահանջով,
- համապատասխանեցման պահանջով,
- բաց թողածը լրացնելու պահանջով,
- ստեղծագործական մոտեցում պահանջող, կամ դրանց համադրմամբ:

Թեմատիկ գրավոր աշխատանքներում պետք է ներառվեն 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ, ինչպես նաև համեմատաբար դժվար առաջադրանքներ, որոնք պահանջում են նյութի խորքային յուրացում, բարդ և անծանոթ իրադրություններում կողմնորոշվելու կարողություն, գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու հմտություն: Այդ գրավոր աշխատանքները գնահատվում են 10 միավորային համակարգով:

Գնահատման 10 միավորային սանդղակը: Բանավոր հարցումների գնահատման չափանիշներ կազմելու համար հաշվի են առնվում գնահատման նպատակը, առաջադրանքի տեսակը, բովանդակությունը, դրա կատարման համար գնահատվողից ակնկալվող պատրաստվածությունը և հետևյալ սանդղակը /ենթադրվում է, որ սանդղակի յուրաքանչյուր միավորը արտահայտում է տվյալ գնահատվողի ցուցաբերած պատրաստվածության առավելագույն մակարդակը, այսինքն՝ գնահատվողը սանդղակի ավելի բարձր միավորին համապատասխանող պահանջներին չի բավարարում /[5].

1 միավոր /<<շատ վատ >>/. առաջին կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար պատրաստվածություն բոլորովին չի ցուցաբերում,

2 միավոր /<<վատ >>/. առաջին կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է մասնակի պատրաստվածություն և թույլ է տալիս էական սխալներ,

3 միավոր /<<անբավարար >>/. առաջին կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություններ, թերություններ և բացթողումներ,

4 միավոր /<<բավարար >>/. առաջին կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն /չի բացառվում, որ կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում, որը ուշադրության հրավիրելու դեպքում ի վիճակի է ինքնուրույն վերացնել /,

5 միավոր /<<միջին >>/. Առաջին կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն կամ երկրորդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություններ, թերություններ և բացթողումներ,

---

Հղում 5 (էջ 20)

6 միավոր /<<միջինից բարձր >>/. Երկրորդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն /չի բացառվում, որ կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում, որը ուշադրության հրավիրելու դեպքում ի վիճակի է ինքնուրույն վերացնել /,

7 միավոր /<<լավ >>/. Երկրորդ կարգի բարդության առաջադրանքների կատարման համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն կամ երրորդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն,թերություններ և բացթողումներ ,

8 միավոր /<<շատ լավ >>/. Երրորդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն /չի բացառվում, որ կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում, որը ուշադրության հրավիրելու դեպքում ի վիճակի է ինքնուրույն վերացնել /,

9 միավոր /<<գերազանց >>/. Երրորդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն կամ դժվարավուն առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ և բացթողումներ ,

10 միավոր /<<բացառիկ >>/. Դժվարավուն առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտպատրաստվածություն /չի բացառվում, որ կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում, որը ուշադրության հրավիրելու դեպքում ի վիճակի է ինքնուրույն վերացնել /:

1. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ՄԻՋՈՑՈՎ

Հետազոտության իրականացման համար մենք գործողությունների իրականացման պլան ենք մշակել, որի միջոցով՝

1. հստակեցվել են ստուգման ենթակա վարկածները,
2. որոշվել է հետազոտության և վերլուծության առարկան՝ մեր պարագայում՝ գնահատումը,
3. ծանոթացել ենք տեսական գրականությանը,
4. որոշվել է տվյալների հավաքագրման ձևը՝ հարցաթերթիկների կազմում,
5. կատարել ենք տվյալների վերլուծություն:

Հետազոտության նպատակն է բացահայտել միավորային գնահատման իրագործման արդյունավետությունը:

Հետազոտական աշխատանքի շրջանակում առաջադրել ենք վարկած, համաձայն որի՝ միավորային գնահատումը խթան է հանդիսանում սովորողի՝ բարձր առաջադիմություն ցուցաբերելու գործում:

Առաջադրված վարկածի ստուգման համար կազմել ենք հարցաթերթիկ և իրականացրել հարցում: Հարցումն անանուն էր, բաղկացած 11 հարցից, որին մասնակցել են 10 ուսուցիչներ: Ստորև ներկայացնում ենք հարցման արդյունքները:

Առաջին հարցին, որն էր *«Խնդրում ենք նշել Ձեր սեռը»*, բոլոր մասնակիցները (10 անձ) պատասխանել են իգական:



Հարցաթերթիկի հաջորդ հարցն էր *«Խնդրում ենք նշել Ձեր կրթական աստիճանը»*, որի արդյունքում պարզվեց, որ հարցվածների 60%-ը (6 անձ) ունեն մագիստրոսի կրթական աստիճան, 30 %-ը (3 անձ)՝ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան և 10 %-ը (1 անձ)՝ բակալավրի կրթական աստիճան:



«Խնդրում եմք նշել Ձեր որակավորումը» հարցին ուսուցիչների 60 %-ը (6 անձ) նշել են մանկավարժ, 20%-ը (2 անձ)՝ մանկավարժության մագիստրոս և 20 %-ը (2 անձ)՝ մանկավարժության բակալավր:



Հարցվածների 50 %-ը (5 անձ) *«Քա՞նի տարվա աշխատանքային փորձ ունեք»* հարցին պատասխանել են 1-5 տարվա, 30 %-ը (3 անձ)՝11-15 տարվա, , 10 %-ը (1 անձ)՝ 6-10 տարվա և 10 %-ը (1 անձ)՝ 16 և ավելի տարվա:



«Ըստ ձեզ՝ ճի՞շտ է ասվորողների գիտելիքները «չափել» միավորներով» հարցին մասնակիցների մեծ մասը պատասխանել են «այո», իսկ երկու ուսուցչի կարծիքով ճիշտ չէ գիտելի քի չափանիշ համարել գնահատականը:

«Ո՞ր դասարանից սկսած եք նպատակահարմար համարում իրականացնել միավորային գնահատում» հարցին հարցման մասնակիցների 50 %-ը (5 անձ) պատասխանել են 2-րդ դասարանից, 30 %-ը (3 անձ)՝5-րդ դասարանից և 20 %-ը (2 անձ)՝առաջին դասարանից:



«Ամենօրյա դասապրոցեսի ընթացքում ի՞նչ հաճախականությամբ եք կատարում միավորային գնահատում» հարցին հարցման մասնակիցների 70 %-ը (7 անձ) պատասխանել է «հաճախ եմ կատարում», 20 %-ը (2 անձ)՝ «միշտ եմ կատարում» և 10 %-ը (1 անձ)՝ «երբեմն եմ կատարում»:



«Ըստ Ձեզ՝ ո՞ր սանդղակով իրականացրած գնահատումն է ավելի օբյեկտիվ» հարցին հարցվողների 80 %-ը (8 անձ) նշել են 10 միավորանոց, 10 %-ը (1 անձ)՝ 5 միավորանոց և 10 %-ը (1 անձ)՝ 100 միավորանոց սանդղակները:



«Խմբային աշխատանքները կատարելիս գնահատում իրականացնո՞ւմ եք» հարցին մասնակիցների 50 %-ը (5 անձ) նշել են, որ երբեմն են կատարում գնահատում (պայմանավորված աշխատանքի բնույթով), 40 %-ը (4 անձ)՝ միշտ են կատարում, իսկ 10 %-ը (1 անձ)՝ չեն կատարում:



«Արդյո՞ք գնահատակարգը աշակերտի համար առաջնային խթան է՝ բարձր առաջադիմություն ցուցաբերելու համար» հարցին ուսուցիչների 50 %-ը (5 անձ) նշել են «երբեմն՝ այո՛», 30 %-ը (3 անձ)՝այո, իսկ 20 %-ի (2 անձ) կարծիքով սովորողի առաջադիմությունը պայմանավորված չէ գնահատակարգով:



«Սովորողներին խրախուսելու, գիտելիքները գնահատելու համար, բացի գնահատականներից այլ ինչ միջոցներ էք կիրառում» հարցին հարցման մասնակիցները ճշտել են, որ նախընտրում են փոքրիկ հուշանվերով, գովասանքի խոսքերով, կոնֆետով, պատվոգրերով խրախուսումը:

Այսպիսով, նկատի առնելով ուսուցիչների ճշած պատասխանները, կարող ենք մեկ անգամ ևս փաստել, որ ուսուցման գործընթացում միավորային գնահատումն ունի կարևոր տեղ ու նշանակություն: Այն կարևոր գործոն է սովորողի գիտելիքների յուրացման մակարդակը թվային տեսքով ներկայացնելու, ինչպես նաև սովորողին մոտիվացնելու և ավելի լավ արդյունքների հասնել տալու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով <<Գնահատում>> թեման, մասնավորապես՝ միավորային գնահատումը, հանգեցինք այն եզրակացության, որ գնահատումը տեղեկատվության ժողովումն է այն բանի մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանին է հասել սովորողը: Այս տեղեկատվությունը հավաքելու համար կարելի է օգտագործել գնահատման

բազմաթիվ եղանակներ: Դրանք կարող են ներառել սովորողի պաշտոնական և ոչ պաշտոնական դիտարկումները, գրավոր տեստերը, տնային աշխատանքի կատարման մակարդակը, լաբորատոր աշխատանքները, հետազոտա-կան բնույթի գրավոր աշխատանքները, նախագծերը, բանավոր հարցումները, սովորողների մասին գրանցումների վերլուծությունը: Գնահատումը հնարավորություն է տալիս վերանայել ուսումնառության առարկայական ծրագրերն ու պլանները, ինչպես նաև որոշումներ կայացնել կրթական քաղաքականության մասին: Սովորողների գիտելիքների գնահատման մասին որոշումները ներառում են՝ դասավանդման կառավարումը, սովորողների կրթական տարբեր ծրագրերում ներառելը, նրանց համապատասխան կարգեր տալը, ուղղորդելը, խորհուրդներ տալը, կրթական հնարավորությունները բացահայտելը, ինչպես նաև նրանց իմացությունը հավաստագրելը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Միքայելյան Ս.Օ., Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, ՀՀ ԿԳ նախ., Կրթ. Ազգային ինստիտուտ, Երևան, 2010թ., 74 էջ :
2. Վարդումյան Ն., Կրթության ժամանակակից մոտեցումներ, Երևան, 2009թ., 389 էջ :
3. ՀՀ Կրթության մասին օրենք, 2008 թ.:
4. Հայոց պատմության ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2009թ.
5. Հայոց լեզվի և հայ գրականության ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2009թ.:Մաթեմատիկայի հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2009 թ.:

1. Միքայելյան Ս.Օ., Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, ՀՀ ԿԳ նախ., Կրթ. Ազգային ինստիտուտ, Երևան, 2010թ., էջ 41:
2. Վարդումյան Ն., Կրթության ժամանակակից մոտեցումներ, Երևան, 2009թ., էջ 256
3. Վարդումյան Ն., Կրթության ժամանակակից մոտեցումներ, Երևան, 2009թ., էջ 258:
4. Միքայելյան Ս.Օ., Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, ՀՀ ԿԳ նախ., Կրթ. Ազգային ինստիտուտ, Երևան, 2010թ., էջ 53:
5. Միքայելյան Ս.Օ., Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, ՀՀ ԿԳ նախ., Կրթ. Ազգային ինստիտուտ, Երևան, 2010թ., էջ 70: